ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

N 01/01-1885
«26» 12 2025

«ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ
(հասցե Ք. Երևան, Վարդանանց 110,
ՀՎՀՀ 02673853, էլ. հասցե Merkado19@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Գալստյան,

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Մերկադո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 26.11.2025թ. կնքվել է ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/Կ-3 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ որի Վաճառողը պետք է պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարել մինչև 22.12.2025թ-ը:

Նկատի ունենալով, որ 25.12.2025թ-ի դրությամբ չի իրականացվել պայմանագրով նախատեսված բնութագրին համապատասխանող ապրանքների (գրասենյակային բամոց - 2 հատ) մատակարարումը, հայտնում ենք, որ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը (այն է՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 25.12.2025թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ «Մերկադո» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցունը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանասների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին փոխանցել **2230** (երկու հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ որպես **տուգանք** (Պայմանագրի 6,3 կետի համաձայն), **669** (վեց հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ՝ որպես

տույժ (Պայմանագրի 6,2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.12.2025թ ներառյալ: Ինչպես նաև պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ **45000** (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ **67500** (վաթսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

- տույժերի, տուգանքների և ապահովումների գումարները վերը նշված ժամկետներում չվճարվելու դեպքում «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը կձեռնարկի միջոցներ՝ դրանք գանձելու ուղղությամբ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվի վերոնշված գումարները և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացվի ՀՊՏՀ-ի գնումների բաժին, ապա «Մերկադո» ՍՊԸ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ **Ա. Գրիգորյան**

Կատարող գնումներ համակարգող՝

Գոհար Թադևոսյան

հեռ.593-483